Բարձր, բայցև մտահոգիչ տնտեսական աճ

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

2006 թվականի ՀՆԱ-ի աճի ցուցանիշներով Հայաստանը աշխարհում գրավել է 5-րդ տեղը, իսկ Ադրբեջանը՝ առաջին: Վերջին 5 տարիների ընթացքում նույն ցուցանիշով Հայաստանը կրկին գրավում է 5-րդ տեղը, Ադրբեջանը՝ առաջին:

Տնտեսական աճ. Զուտ քանակական ցուցանիշ

Թեպետ Հայաստանը արձանագրում է աննախադեպ տնտեսական աճ, և նույնիսկ Համաշխարհային բանկի փորձագետների կողմից մեր տնտեսությունը որակվել է որպես «Կովկասյան վագր», և պետք է, որ հայ հասարակությունը հպարտ լինի այս ձեռքբերումով, այնուամենայնիվ անկախ տնտեսագետներն այսօր շշուկով խոսում են մտահոգությունների ու հնարավոր վտանգների մասին: Կան ախտանիշեր, որոնք ավելի խոսուն են, քան «տնտեսական աճ» զուտ քանական ցուցանիշը: Եվ խնդիրը նրանում չէ, որ Ադրբեջանն իր տնտեսական աճի տեմպերով առաջինն է և գերազանցում է Հայաստանին բազմապատիկ անգամ: Անկախ տնտեսագետներին քաղաքական պոպուլիզմը քիչ է հետաքրքրում:

Այսօր ունենք ՀՆԱ-ի աճի մասով լավ քանական արդյունք, ժամանակն է մտահոգվել նաև այդ աճի որակական կողմի մասին: Ադրբեջանը, Հայաստանը, Թուրքմենստանը և Չինաստանը այն երկրներն են, որ վերջին հինգ տարում իրենց տնտեսական աճով զարմացնում են աշխարհին: Եթե Ադրբեջանն ու Թուրքմենստանը տնտեսական աճով պարտական են բնական պաշարներին, ապա նույն համեմատությունը Հայաստանի և Չինաստանի միջև չի խոսում ի օգուտ մեր երկրի: Հայաստանի տնտեսական աճը չունի որակական այն բնութագրիչները, ինչ Չինաստանը, Հայաստանի տնտեսական աճի գործոնները պայմանավորված չեն այնպիսի ոլորտներով և ուղղություններով, որոնք բարձր կպահեին Հայաստանի մրցունակությունը միջազգային տնտեսության համատեքստում: Ընդհակառակը, այսօրվա Հայաստանի տնտեսական աճն իրականում թուլացնում է Հայաստանի մրցունակությունը:

Հիմնախնդրի որոշ ախտանիշեր

1. *Դրամական զանգված/ՀՆԱ հարաբերակցությունը* Հայաստանում վերջին 7 տարիների ընթացքում պտտվում է 20%-ի շուրջը: Առողջ տնտեսություններում, որտեղ կա լիկվիդային կապիտալ, որտեղ ներդրումները կատարվում են ոչ միայն քարի ու բետոնի մեջ, այս ցուցանիշը պետք է գերազանցի ՀՆԱ-ն՝ պտտվելով 200%-ի շուրջը:
2. Փողը կենտրոնացված է և «պտտվում է» միայն մեկ քաղաքում՝ Երևանում: Թե՛ *աշխարհագրական տեսանկյունից, և թե՛ բնակչության շերտերի միջև տնտեսական աճը հավասարապես չի բաշխվում* Հայաստանում: Անհամաչափ զարգացումը հղի է մի շարք հետևանքներով, որոնց շարքում է նաև ազգային անվտանգությունը՝ հանձինս ներքին միգրացիայի վտանգներով:
3. Եթե 2001 թվականին բանկերը մասնավոր հատվածին վարկավորում էին 10 անգամ ավելի շատ, քան հանրային հատվածին, ապա 2006 թվականին այս ցուցանիշը 5 անգամ նվազել է: *Հանրային հատվածը՝ հատկապես կենտրոնական բանկը, մասնավոր հատվածին տրված միջոցների կեսի չափով էլ ինքն է գումարներ փոխառում:* Սա ակնհայտ դուրսմղման էֆեկտ է, ինչը նշանակում է, որ մարդկանց խնայողությունների և իրական հատվածի կապը թուլանում է՝ առևտրային բանկերը տնտեսության

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

արդյունավետ միջնորդի դերը ստանձնելու փոխարեն վեր են ածվում դրամավարկային քաղաքականության գործիքի:

4. ՀՆԱ-ն՝ ըստ ծախսման բաղադրատարրերի աճում է հիմնականում ներմուծման հաշվին կամ, ավելի ճիշտ, ընթացիկ սպառման, շինարարական ծախսումների և ներմուծման տարբերության հաշվին: *Դրամական փոխանցումների հաշվին ուղղակի կամ անուղղակի կատարվող շատ ծախսումներ հենց հանդիսանում են Հայաստանի տնտեսական աճի հիմնական աղբյուրը:*

5. ՀՆԱ-ն՝ ըստ եկամուտի բաղադրատարրերի աճում է հիմնականում համախառն շահույթի հաշվին կամ, ավելի պատկերավոր, հիմնականում *ունևոր խավն է առավելապես զգում ՀՆԱ աճի ներկա տեմպերը:*

6. *Աղքատ և միջին խավի բարեկեցության աճը հիմնականում պայմանավորված է դրամական փոխանցումներով:* Տնտեսական աճը նույնպես պայմանավորված է այս գործոնով: Այսօրվա տնտեսական աճը պայմանավորված չէ մրցունակ իրական հատվածի զարգացմամբ:

7. Դրամական հատվածում առկա միտումների և քաղաքականության հետևանքով *տեղի է ունենում* Հայաստանի *արտահանման ոլորտի մրցունակության անկում:*

Սպասելիքներ

Հայաստանը վաղուց պլանային տնտեսություն չէ: Ամենամեծ սխալը կլիներ փորձել անմիջականորեն միջամտել տնտեսություն գործող սուբյեկտների գործունեությանը և փորձել նրանց մրցունակությունն ուղղակի միջամտությամբ բարձրացնել: Հայաստանն ունի տնտեսության բարձր քանակական աճ, սակայն պարադոքսալ ոչ մրցունակ տնտեսություն, եկամուտների անհավասարաչափ բաշխում և քաղաքականություն (կամ դրա բացակայություն), որը հարվածում է արտահանողների շահերին: Այս իրավիճակը առանձնահատուկ է և շատ առումներով հակասական: Ստանդարտ, դասագրքային կամ միջազգային փորձի հիման վրա լուծումներ չկան:

Աղքատներն իրենց վիճակը «բարելավում են» արտագնա աշխատանքների միջոցով՝ դրամական փոխանցումների միջոցով ապահովելով տնտեսական աճ, ունևորները՝ կապիտալիստները, մեծամեծ շահույթներ են ստանում առկա տնտեսական աճից, բանկերը սպասարկում են դրամավարակային քաղաքականության խնդիրները, ստանում են շահույթներ, և դրամական արդյունավետ միջնորդի դերը նրանց քիչ է հուզում, բյուջեն համալրվում է անուղղակի հարկերով՝ ի հաշիվ դրամական փոխանցումներով պայմանավորված սպառման և ներմուծման աճի: Կարելի է ասել, որ բոլորը գոհ են, և չկա գիտակցումն առ այն, որ այս դինամիկան շարունակվելու դեպքում այս «հրաշքը» կարող է 10 տարի հետո վերածվել մի իսկական ճգնաժամի՝ դժոխային վիճակի...

Դրված է խնդիր, որի լուծումը միանշանակ չէ: Սակայն մինչ լուծումներ գտնելը անհրաժեշտ է խնդրի գիտակցում: Այսօրվա բարձր, բայցև մտահոգիչ տնտեսական աճի հիմնախնդիրը պետք է դառնա թիվ 1 օրակարգային հարցը: Աղքատության կրճատման բանալին իրապես մրցունակ տնտեսություն կայացնելն է, մի բան որ այսօր չունենք, իսկ եղածն էլ թուլանում է:

Համառոտագիրը մշակվել է 2007թ-ի հուլիսի 27-ին կայացած՝ "Երկնիշ տնտեսական աճ. Հայաստանի տնտեսության աճի միտումները և մտահոգությունները" վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի աջակցությամբ: